



Save the Children



World Vision



ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ «Երեխաների կարծիքով...»

Ապրիլ - Մայիս, 2017 Հայաստան



ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Երեխաների կարծիքով...»

Ապրիլ - Մայիս, 2017 Հայաստան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	4
Ինչի մասին է «Երեխաների կարծիքով...» հարցումը	4
Ո՞րն է համագործակցության նպատակը	5
Ինչպե՞ս կարելի է օգտագործել հետազոտության արդյունքները	5
Ինչպե՞ս է իրականացվել հետազոտությունը	6
Տվյալների հավաքագրում	6
Ընտրանք	7
Հարցման գործիքը	8
Ֆոկուս խմբերի քննարկումներ	8
«Երեխաների կարծիքով...» հետազոտության հիմնական արդյունքները	9
Երեխայի իրավունքների իմացություն (իրավունքներ և Երեխաների իրավունքների մասին Կոնվենցիա)	9
Մասնակցություն և ազդեցություն (մասնակցություն որոշումների ընդունմանը, երեխայի իրավունքների պաշտպանություն)	9
Սոցիալ-հոգեբանական բարեկեցություն (աջակցություն և օգնություն, դպրոցին առնչվող խնդիրներ, երեխաների ապագան)	11
Հետազոտության մանրամասն արդյունքներ	11
Երեխայի իրավունքների իմացություն	12
Անվտանգություն և բռնություն	13
Անվտանգություն	13
Աշխատանք և դպրոցական արտենտեիզմ	17
Սոցիալ-հոգեբանական բարեկեցություն	18
Սթրեսի աստիճան	18
Աջակցության և օգնության որոնում	18
Գոհունակություն դպրոցից	19
Գոհունակություն դասավանդման մեթոդներից	21
Օգնություն տնային աշխատանք կատարելիս	21
Մասնակցություն և ազդեցություն	22
Հարգանք երեխայի կարծիքի հանդեպ	22
Երեխայի իրավունքների պաշտպանություն	24
Ապագան	24
Եզրակացություն	26
Հավելված: Հարցաթերթիկ	28

Նախաբան

Ինչի՞ մասին է «Երեխաների կարծիքով...» հարցումը

«Երեխաների կարծիքով...» համազգային հարցումը բարձրաձայնում է երեխաների մտքերն իրենց վերաբերող որոշակի խնդիրների վերաբերյալ: Հարցումն իրականացվել է հարցաթերթիկների և ֆոկուս խմբային քննարկումների միջոցով՝ Հայաստանի տասը մարզերի և Երևանի մոտ 1200 երեխաների շրջանում: Հարցերը վերաբերում էին համայնքային, մարզային և ազգային պարտավորություններին ու այնպիսի թեմաներին, ինչպիսիք էին որոշումների կայացումը, կրթությունը, անվտանգությունը, ապագայի ընկալումը և հոգեբանական խնդիրները: Հարցումը կազմված էր Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայից ընտրված հոդվածներից՝ հաշվի առնելով Հայաստանի համար որպես առանցքային մարտահրավեր սահմանված՝ Երեխայի իրավունքների կոմիտեից ստացված առաջարկությունները: Այս հարցման մեջ ներառված են նաև «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության և Վորլդ Վիժն Հայաստանի կողմից իրականացված ծրագրերի հետ առնչվող այլ թեմաներ՝ ուսումնասիրելու համար երեխաների տեսակետները և կարծիքները իրենց բարեկեցությանն առնչվող հարցերի վերաբերյալ: Հարցման արդյունքներն եզակի հնարավորություն են ստեղծում քաղաքականություն մշակողների և բոլոր մակարդակների գործադիր մարմինների, ինչպես նաև դոնորների և երեխաների պաշտպանության ուղղությամբ աշխատող կազմակերպությունների համար՝ երեխաների կարիքներին ու ձգտումներին ուղղված համալիր ծրագրեր նախագծելու նպատակով՝ այդպիսով ապահովելով երեխաների մասնակցությունը:

Հարցումն ի սկզբանե մշակվել է «Սեյվ դը չիլդրեն» Շվեդիայի կողմից, որը նմանատիպ հարցում կատարել է Շվեդիայում և նաև աջակցել է տարածաշրջանում մի շարք երկրներում նման հարցման իրականացմանը: «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը, համագործակցելով Վորլդ Վիժն Հայաստանի և Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ (ՀՀ Օմբուդսմեն), փոքր-ինչ ադապտացրել է այն՝ դարձնելով ավելի համահունչ հայկական համատեքստին:

Ո՞րն է համագործակցության նպատակը

Հարցումը լուսաբանում է, թե ինչպես են երեխաները ընկալում իրավիճակը և ինչպես են նրանք ընկալում իրենց իրավունքների հարգումը և պաշտպանությունը: «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունն իր գործընկերների հետ միասին դիտարկում են այս հարցումը որպես երեխաների իրավունքների պաշտպանության համար կայուն հիմք ստեղծելու գործիք, որն ամրագրված է Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ հոդվածում և վերաբերում է երեխաների կյանքին առնչվող հարցերում երեխաների մասնակցության և նրանց կարծիքները լսելու իրավունքին: Հարցման նպատակն է տարածել այս տեղեկությունները և մղել այն մեծահասակներին, ովքեր փոքրիշատե ազդեցություն ունեն երեխաների կյանքին վերաբերող հարցերում, հարցման արդյունքներն ընդունել որպես հիմք և առաջնորդվել դրանցով:

ՀՀ Սահմանադրությանը համահունչ՝ «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը, համագործակցելով Վորլդ Վիժն Հայաստանի հետ, նպատակ ունի երեխաների բարեկեցության հարցերը քննարկելիս երեխաների կարծիքներն ավելի լսելի դարձնելու համար հզորացնել շահերի պաշտպանությանն ուղղված ջանքերն ընթացակարգերի մշակման գործընթացում՝ հաշվի առնելով նրանց հատնության աստիճանն այնպիսի մակարդակներում, ինչպիսիք են խորհրդարանը, կառավարությունը և տեղական ու մարզային իշխանությունները: «Գործը մնում է գործ» մոտեցումը տանը, համայնքում և այլ ավելի բարձր քաղաքականություն մշակող կառույցներում պետք է փոխել՝ հաշվի առնելով երեխաների կարծիքները իրենց բարեկեցությանը վերաբերող հարցերի վերաբերյալ: Այս համագործակցությունը վստահ է, որ հետազոտության ձեռքբերումները լավ հիմք կհանդիսանան ավելի լավ քաղաքականություններ մշակելու համար և կբարձրացնեն երիտասարդների և երեխաների կյանքի որակը:

Ինչպե՞ս կարելի է օգտագործել հետազոտության արդյունքները

Հարցման արդյունքները հիմնված է Հայաստանի ամբողջ տարածքն ընդգրկող ներկայացուցչական ընտրանքի վրա: Հետազոտության ներկայացված արդյունքները ներառում են մի շարք խնդիրների առավել հանգամանալից վերլուծությունը, իսկ բոլոր հարցերին տրված պատասխանների քանակական ամփոփումը տեղ է գտել Հավելված 1-ում: Հետազոտության

մեթոդաբանության և հիմնական արդյունքների մասին առավել մանրամասն տեղեկություն կարելի է գտնել հետազոտության ամբողջական զեկույցում, որը հասանելի է «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության պաշտոնական կայքում՝ <https://armenia.savethechildren.net/resources>:

Ինչպե՞ս է իրականացվել հետազոտությունը

Տվյալների հավաքագրում

Հետազոտությունն իրականացվել է «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության կողմից՝ Վորլդ Վիժն Հայաստանի հետ համագործակցությամբ: Տվյալները հավաքագրվել են Հայաստանի 67 դպրոցներում՝ ներառելով 10 մարզերը և Երևանը: Կոնվենցիայի 3-րդ հոդվածը, որը վերաբերում է երեխայի լավագույն շահի սկզբունքին, կենտրոնական դեր ունի «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության գործողությունների համար: Այդ պատճառով էական է, որ երեխաներին հնարավորություն ընձեռնվի իրենց կարծիքն արտահայտել առանց անհանգստանալու, որ իրենց պատասխանները կարող են ստուգվել: Միաժամանակ, հարցումը երեխաների համար ուսուցողական վարժություն էր, քանի որ նրանք հարցաթերթիկը լրացնելիս ավելի շատ գիտելիքներ ձեռք բերեցին իրենց իրավունքների մասին: Դպրոցն ընտրվել էր որպես մի միջավայր, որտեղ հեշտ է գտնել բոլոր երեխաներին և որտեղ կարելի է ապահովել առավելագույն գաղտնիություն և անվտանգություն: Այդ պատճառով հարցումն իրականացվել է դպրոցներում՝ օգտագործելով ինքնուրույն լրացվող հարցաթերթիկներ: Տվյալների հավաքագրումը կատարվել է տվյալ ոլորտի ուսուցիչների կողմից, որոնց ներկայացվել է սույն հետազոտության նպատակն ու մեթոդները, ինչպես նաև երեխաների պաշտպանության սկզբունքները:

Ընտրանք


Համաձայն սույն հետազոտության նպատակի և խնդիրների՝ հարցվածների թիրախային խումբը դպրոցականներ էին՝ բաժանված 3 տարիքային խմբերի՝ 12, 14 և 16 տարեկան երեխաներ, որոնք համապատասխանաբար հաճախում են 7-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններ: Գյուղական և քաղաքային համայնքներից ընդհանուր թվով 1200 աշակերտներ մասնակցել են Հայաստանում անցկացվող սույն հարցմանը, որն իրականացվել է Հայաստանի 10 մարզերի և Երևանի 67 դպրոցներում: Դպրոցների ընտրությունը յուրաքանչյուր մարզում կատարվել է ընտրանքային տեխնիկաների համամասնության սկզբունքով:

Աղյուսակ 1. Դպրոցների ընտրությունը՝ դասակարգված ըստ մարզային և համայնքային տեսակների


Մարզ	Համամասնությունը ընտրանքում	Դպրոցների ընտրանքը	Գյուղական	Քաղաքային
Երևան	18%	12	-	12
Լոռի	12%	8	5	3
Գեղարքունիք	9%	6	5	1
Արմավիր	9%	6	5	1
Արագածոտն	9%	6	5	1
Սյունիք	9%	6	4	2
Արարատ	9%	6	5	1
Կոտայք	9%	6	4	2
Տավուշ	6%	4	3	1
Շիրակ	6%	4	3	1
Վայոց Ձոր	3%	3	2	1
Ընդհանուր	100%	67	41	26

Պատահական ընտրանքի սկզբունքով ընտրվել են դպրոցների թիրախային դասարաններում սովորող աշակերտներ: Ստորև ներկայացված պատկերները ցույց են տալիս հարցմանը մասնակցած տղաների և աղջիկների համամասնությունը և մասնակիցների բաշխումը՝ ըստ դասարանների:

Պատկեր 1. Տոկոսային բաշխում՝ ըստ սեռի



Պատկեր 2. Մասնակիցների բաշխում՝ ըստ դասարանների



Հարցման գործիքը

Հարցման գործիքը հայաստանյան համատեքստին հարմարեցված ինքնուրույն լրացվող հարցաթերթիկն է, որը մշակվել է Շվեդիայում այս հարցումն նախաձեռնելու ընթացքում: Հարցման հարցաթերթիկը պատրաստվել է «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության, Վորլդ Վիժն Հայաստանի և Մարդու իրավունքի պաշտպանի գրասենյակի փորձագետների թիմերի համատեղ ջանքերով: *Սեյվ դը չիլդրեն* կազմակերպության երիտասարդական խորհրդի անդամները (14-18 տարեկան երեխաներ) հաստատել են հարմարեցված տարբերակը և ձևափոխել են այն՝ հիմնվելով ստացված արձագանքների վրա: Վերջնական հաստատումը տրամադրել է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: Հարցման գործիքին և ֆոկուսային խմբի ուղեցույցին վերաբերող հարցերը հիմնված են Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի և Հայաստանի՝ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին հանձնաժողովից ստացված առաջարկությունների վրա:

Ֆոկուս խմբերի քննարկումներ

Ի հավելումն դպրոցականների շրջանում կատարված հարցմանը՝ իրականացվել են նաև 13 ֆոկուս խմբային քննարկումներ՝ թեմաների վերաբերյալ ավելի խորը պատկերացում կազմելու համար: Կարմիր վանդակներում և տեքստի մեջ նշված բոլոր մեջբերումները դուրս են բերվել երեխաների հետ ֆոկուս խմբային քննարկումներից, որոնք իրականացվել են Երևանում և որոշ մարզերում (Գեղարքունիք, Կոտայք, Արարատ և

Արագածոտն): ՖԻՄ մասնակիցներն ընտրվել են հարցմանը մասնակցած դպրոցականների շրջանակից: ՖԻՄ մասնակիցների ընդհանուր թիվը 117 է (53 տղա և 64 աղջիկ):

«Երեխաների կարծիքով...» հետազոտության հիմնական արդյունքները

Երեխայի իրավունքների իմացություն (իրավունքներ և Երեխաների իրավունքների մասին Կոնվենցիա)

- ✓ Հարցվածների 82%-ը համաձայն էին, որ քաղաքական գործիչներն ու որոշում ընդունողները պետք է կարևորեն երեխաների տեսակետը:
- ✓ Երեխաների 70%-ը նշեցին, որ դպրոցում սովորել են երեխայի իրավունքների մասին: 54%-ը ասացին, որ տեղյակ են Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայից: Միայն 32%-ը նշեցին, որ Կոնվենցիայի մասին տեղեկացել են դպրոցում:
- ✓ Հարցված երեխաների 82%-ը նախորդ տարում կարողացել են ընտանիքում տեսակետներ արտահայտել իրենց մտահոգող խնդիրների վերաբերյալ, մինչդեռ նրանց միայն 26%-ին է հնարավորություն ընձեռնվել խոսել համայնքային խնդիրների մասին:

Մասնակցություն և ազդեցություն (մասնակցություն որոշումների ընդունմանը, երեխայի իրավունքների պաշտպանություն)

- ✓ Երեխաների 64%-ը համոզված են, որ նրանք պետք է կրթությանը/դպրոցին առնչվող խնդիրների վրա ազդելու հնարավորություն ունենան, և հարցվածների 76%-ը կցանկանային իրենց մտահոգող խնդիրների հանդեպ ավելի մեծ ազդեցություն և դրանց փոխելու հնարավորություն ունենալ:
- ✓ Հարցված երեխաների 80%-ը ցանկանում են իրենց հանգստի և արտադպրոցական միջոցառումների վրա ազդելու ավելի մեծ հնարավորություն ունենալ, իսկ 58%-ը պնդում են, որ դպրոցների ենթակառուցվածքներում պետք է բարելավվեն ժամանցային տարածքները:
- ✓ Հարցվածների 86%-ը համաձայնեցին այն պնդմանը, որ կարևոր կամ

շատ կարևոր է Հայաստանում միջոցներ ձեռնարկել ուժեղացնելու երեխայի իրավունքների պաշտպանությունը

- ✓ Հարցված երեխաների 49%-ը տեղյակ չեն՝ ուր դիմել և որտեղից օգնություն ստանալ բռնության ենթարկվելու պարագայում: Երեխաների 40%-ը տեղյակ չեն՝ ում դիմել, եթե ենթարկվել են ծաղրի կամ արժանացել անարդար վերաբերմունքի: Այնուամենայնիվ, հարցվածների 72%-ը գիտի՝ ում դիմել, եթե ցանկանում են խոսել ընտանեկան խնդիրների մասին:

Անվտանգություն և բռնություն (անվտանգություն, աշխատանք և դպրոցական արքենտեիզմ)

- ✓ Երեխաների 84%-ը նշեցին, որ Հայաստանում պետք է ավելի շատ ջանքեր գործադրվեն ծաղրանքն ու հետապնդումը կանխարգելելու նպատակով: Երեխաների 35%-ը նվազագույնը 1-5 անգամ դպրոցում ծաղրանքի ականատես են եղել, մինչդեռ երեխաների 90%-ը պատասխանել է, որ չունեն ծաղրանքի կամ բռնության ենթարկվելու մտահոգություն:
- ✓ Հարցված երեխաների 38%-ը տեսել են՝ ինչպես են համայնքում երեխայի ծեծում կամ բռնուցքներով հարվածում: Միայն 9%-ն են միջադեպերի մասին տեղյակ պահել համապատասխան մարմինների:
- ✓ Երեխաների 11%-ը հայտարարեցին, որ այս կամ անցած տարի չեն կարողացել դպրոց հաճախել աշխատանքում շաբաթական 14 ժամից ավել ներգրավված լինելու պատճառով: Այդ հարցվածների 73%-ը բնակվում էին գյուղական համայնքներում:
- ✓ Ըստ երեխաների՝ ծաղր պարունակող հինգ միջադեպից մեկը (21%) տեղի է ունեցել արտաքին տեսքի, իսկ 10%-ը՝ ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակի պատճառով:
- ✓ Համաձայն դպրոցական երեխաների՝ հաշմանդամություն ունենալու հանգամանքը գրեթե երբեք ծաղրանքի կամ բռնության հիմք չի հանդիսանում: Հարցվածների 74%-ը մեծապես կարևորում են այն պնդումը, որ Հայաստանը պետք է ավելի շատ ջանքեր գործադրի հաշմանդամություն ունեցող երեխաներին կյանքի բոլոր ոլորտներում ներառելու համար:

Սոցիալ-հոգեբանական բարեկեցություն (աջակցություն և օգնություն, դպրոցին առնչվող խնդիրներ, երեխաների ապագան)

- ✓ Հարցված երեխաների 82%-ը դրական են տրամադրված իրենց ապագայի հանդեպ: 84%-ը հայտնում են, որ գիտեն՝ ուր են գնալու դպրոցն ավարտելուց հետո: 96%-ը նշում են, որ դա իրենց սեփական նախասիրությամբ է, և ոչ իրենց ծնողների:
- ✓ 55%-ը բավարարված են իրենց դպրոցներում դասավանդման մեթոդներից, իսկ 13%-ը հիմնականում կամ ընդհանրապես բավարարված չէին:
- ✓ Հարցվածների 14%-ը նշել է, որ անցյալ տարի տևական ժամանակ տխուր և ընկճված է եղել:
- ✓ Հարցվածների 92%-ը օրական նվազագույնը երկու ժամ համացանց է օգտագործում և 88%-ը տեղյակ է՝ ինչպես անվտանգ օգտվել համացանցից:
- ✓ Հարցվածների 13%-ը նշել են, որ որևէ չափահաս անձ փորձել է առցանց կապ հաստատել իրենց հետ և զրուցել ինտիմ թեմաների շուրջ, իսկ հարցվածների 7%-ը նշել են, որ վիրավորական բնույթի առցանց հաղորդագրություններ են ստացել:

Հետազոտության մանրամասն արդյունքներ

Հարցման արդյունքները խմբավորվում են ըստ չորս գործոնների՝

- ✓ Երեխայի իրավունքների իմացություն (իրավունքներ և երեխաների իրավունքների մասին կոնվենցիա)
- ✓ Անվտանգություն և բռնություն (անվտանգություն, աշխատանք և դպրոցական արքենտեիզմ)
- ✓ Սոցիալ-հոգեբանական բարեկեցություն (սթրեսի աստիճան, աջակցություն և օգնություն, դպրոցին առնչվող խնդիրներ)
- ✓ Մասնակցություն և ազդեցություն (մասնակցություն որոշումների ընդունմանը, երեխաների օմբուդսմենը, երեխաների ապագան)

Երեխայի իրավունքների իմացություն

Ըստ հարցման տվյալների՝ **10 երեխաներից 7-ը (70%)** փաստել են, որ դպրոցում են տեղեկացել երեխաների իրավունքների մասին: **Հարցվածների կեսից ավելին (54%)** դրական

«Ես գիտեմ միայն, որ դա երեխայի պաշտպանության համար է, սակայն բոլոր մանրամասները չգիտեմ»:

պատասխան է տվել Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի մասին իրենց իրազեկվածության վերաբերյալ: Հիմնվելով ստացված տեղեկատվության վրա՝ կարելի է ասել, որ թե՛ հարցման մասնակիցները, և թե՛ ֆոկուս խմբերը հիմնականում տեղյակ էին երեխաների հիմնական իրավունքների մասին: Հարցվածները կարողացել են նշել երեխայի մի քանի իրավունքներ, իսկ մեծամասնությունը նշել է երեխայի առնվազն երեք հիմնական իրավունք: Այս թվերը տվյալ հարցման ամենաոգեշնչող և զարմացնող արդյունքներն էին: Այնուամենայնիվ, միայն **32%-ն է** նշել, որ հենց դպրոցում են իրենց ներկայացրել Կոնվենցիան: Սա նշանակում է, որ Կոնվենցիայի մասին տեղեկատվության առաջնային աղբյուրը դպրոցը չի եղել, ինչը պետք է նկատի ունենան կրթական ոլորտի համար քաղաքականություն մշակողները՝ հզորացնելով մարդու իրավունքների մասին դպրոցական ծրագիրը՝ երեխաների իրավունքների մասին այս հիմնական փաստաթուղթը կարևորելու միջոցով: Ստորագրելով Կոնվենցիան՝ կառավարությունը ոչ միայն ստանձնել է սույն փաստաթղթում նշված իրավունքների կիրառման ապահովումը, այլ նաև հանձն է առել լայնորեն տարածել և հատուկ բարձրացնել Կոնվենցիայի մասին իրազեկվածությունը բոլոր հնարավոր միջոցներով:


Անվտանգություն և բռնություն

Անվտանգություն

Երեխաների 84%-ը մեծ կարևորություն է տալիս այն փաստին, որ Հայաստանում պետք է ավելի շատ աշխատանքներ իրականացնել բռնության դեպքերը կանխելու ուղղությամբ: Երեխաների 35%-ը դպրոցներում տեսել է բռնության դեպքեր այս կամ անցած տարվա ընթացքում առնվազն 1-5 անգամ: Սա նշանակում է, որ գրեթե յուրաքանչյուր երկրորդ երեխան դպրոցում ականատես է եղել բռնության: Ավելին, **հարցվածների 38%-ը** պատասխանել է, որ այս կամ նախորդ տարի իրենց դպրոցում կամ համայնքում տեսել են ինչ-որ մեկին հարվածելիս: Չնայած այն փաստին, որ երեխաների **90%-ը** պատասխանել է, որ չունեն հարված ստանալու կամ բռնության ենթարկվելու մտահոգություն, վերոնշյալ արդյունքները ցույց են տալիս, որ որոշակի հակասություն կա այն երեխաների միջև, ովքեր նշել են, որ իրենց նկատմամբ կիրառվել է բռնություն, և ովքեր տեսել են, թե ինչպես են իրենց հասակակիցներին բռնության ենթարկում: Կարելի է ենթադրել, որ երեխաները չունեն իրենց հետ պատահած միջադեպերի մասին խոսելու ցանկություն, որը խոսում է այն մասին, որ Հայաստանում առհասարակ տրամադրված չեն բարձրաձայնել բռնության դեպքերը: Սա հանգեցնում է այն եզրակացության, որ երեխաներին թե՛ դպրոցներում, և թե՛ համայնքներում բռնության ենթարկելն ու հարվածելը լայնորեն տարածված է, սակայն դա առկա է թաքնված իրականության մեջ, որն ավելի խորը վերլուծության կարիք ունի, և պետք է ավելի շատ գործողություններ ձեռնարկել նման խնդիրները լուծելու և այդ միջադեպերի մասին համապատասխան մարմիններին տեղյակ պահելու ուղղությամբ:

«Բռնության դեպքեր նույնպես հանդիպում են. մենք կռվում ենք, որովհետև փորձում ենք բացատրել, իսկ նրանք չեն հասկանում: Մեզ մնում է միայն կռվել»:


Պատկեր 3. Ձեր հասակակիցներից ճանաչում եք մեկին, ում ծաղրել են կամ ուրնծգության են ենթարկել նախորդ փարվա ընթացքում ստորև նշված պատճառներով



Կից ներկայացված Պատկեր 3-ն ավելի մանրամասն ձևով ցույց է տալիս հայաստանյան դպրոցներում և համայնքներում բռնության և ոտնծգության հիմնական պատճառները:

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ունենալ ապահով մանկություն՝ առանց բռնության որևէ տեսակի կիրառման: Նրանք չպետք է ենթարկվեն բռնության, պիտակավորման կամ ցանկացած տեսակի ոտնծգության: Երեխաներն իրավունք ունեն իրենց լավ զգալու և պետք է պարտադիր օգնություն ստանան, եթե իրենց վատ են զգում կամ իրենց վատ են վերաբերվել կամ վնասել են: Եթե ընտանիքում մեծահասակները չեն կարողանում օգնել խոցելի իրավիճակում գտնվող իրենց երեխաներին, ապա հասարակությունը պետք է իր վրա վերցնի պատասխանատվությունը և ապահովի, որպեսզի երեխաները ստանան համապատասխան օգնություն: Թեև տարբեր վայրերի և իրավիճակների անվտանգությունը զնահատող պատասխանները կազմել են «միշտ անվտանգ եմ զգում» պատասխանի **առնվազն 41%-ը**, Պատկեր 4-ը ցույց է տալիս երեխաների համար ամենավտանգավոր տեղերը և իրավիճակները:

Պատկեր 4. Հազվադեպ կամ երբեք անվտանգ չեն զգում հետևյալ վայրերում



Հարցման արդյունքները, որոնք արտացոլում են երեխաների պատկերացումներն իրենց անվտանգության մասին, ներառում են ևս մեկ ահազանգող տվյալ: Հարցվածների մոտ **3%-ը** մեծահասակի կողմից բռնության ենթարկվելու վտանգ են զգացել, և **5%-ը** անհանգստացած են եղել խտրականության հնարավոր սուբյեկտ դառնալու վտանգից: Մեկ այլ անհանգստացնող տվյալ առնչվում է անչափահասների և մեծահասակների միջև առցանց հաղորդակցությանը՝ հարցվածների **13%-ը** փաստել են, որ նրանց հետ մեծահասակն առցանց հաղորդակցվել է և ցանկացել է խոսել անձնական թեմաների մասին: Հարցվածների մոտ **11%-ը** նշել են, որ այլ երեխաներից կամ մեծահասակներից առցանց կամ բջջային հեռախոսով ստացել են վիրավորական հաղորդագրություններ:

Այդ հարցերը պահանջում են հատուկ ուշադրություն՝ կապված թե՛

«Դուք չեք կարող օգտագործել համացանցը և ձեզ անվտանգ զգալ»:

երեխաների շրջանում SS անվտանգության մասին իրազեկվածության մեծացման, և թե՛ իրավապահ մարմինների կողմից ավելի արագ մոնիտորինգի ու կանխարգելման մեխանիզմների ընդլայնման հետ:

Որոշ դեպքերում աշակերտները փորձում են կանխել ծաղրանքը դպրոցներում՝ օգտագործելով բռնի և ոչ բռնի միջոցներ: Բռնի միջոցներից են համարվում, օրինակ, «բացատրելը», որ ծաղրելը և հաշմանդամություն ունեցող երեխաներին ձեռք առնելն անընդունելի է իրենց համար: Ոչ բռնի միջոցներից են ընկերական շրջապատում զրույցները: Ուսուցիչները նույնպես փորձում են կանխել նման պահվածքը:

Որոշակի մեթոդներ բարձրաձայնվել են ֆուկուս խմբերի կողմից, ինչպիսիք են տարբեր թեմաների շուրջ ուսուցիչների և ծնողների հետ զրույցների կազմակերպումը, ուսուցիչների կողմից համապատասխան համայնքի կազմակերպումը,

«Պետք է այնպիսի դրույթ լինի, որի համաձայն կտուգանվեն երեխաներին բռնության ենթարկած ծնողները. միգուցե նրանք ավելի զգոն դառնան, երբ հարցը դիպչի գրպաններին»:

երեխաների ազդեցիկ պահվածքի մասին ծնողներին տեղեկացումը, սոցիալական աշխատողների, սոցիոլոգների և հոգեբանների հետ ընտանեկան խնդիրների և երեխաների իրավունքների մասին հեռուստատեսային զրույցների կազմակերպումը:


Ուսուցիչների հիմնական աշխատանքը ծնողների հետ բացատրական զրույցներն են: Որոշ դպրոցներում դասղեկները անցկացնում են երեխաների հետ զրույցներ, որի ընթացքում քննարկում են միջադեպը, և առաջարկում են ընդունելի պահվածքի օրինակներ: Այնուամենայնիվ, հայաստանյան հասարակության բոլոր դերակատարների կողմից պետք է ձեռնարկվեն ամբողջական միջոցառումներ՝ փոխելու համար բռնարար մոտեցումները: «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը, Վորլդ Վիժն Հայաստանի, երեխաների հարցերով զբաղվող տասը ՀԿ-ների, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և մեդիա գործընկերների հետ համատեղ նախաձեռնել է «Վերջ երեխաների հանդեպ բռնությանը» հնգամյա հանրային արշավ՝ «Բռնությունը փոխարինենք սիրով» կարգախոսով:

Աշխատանք և դպրոցական արսենտեիզմ

Վաղ տարիքում աշխատելը երեխաների կրթության խոչընդոտներից մեկն է: Այն առավել տարածված է գյուղական և հեռավոր բնակավայրերում: Երևանում երեխաները դասերից հաճախ չեն բացակայում: Որոշ շրջաններում ձմռանը եղանակային պայմանների պատճառով ճանապարհներն անանցանելի են դառնում: Սա նաև նշվել է որպես դպրոցից բացակայելու պատճառ: Սակայն Հայաստանի որոշ մասերում (ինչպիսիք են Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի մարզերը), որոշ հարցվածներ նշել են, որ ճանաչում են այնպիսի երեխաների, ովքեր բացակայել են դպրոցից աշխատանքում ներգրավված լինելու պատճառով:

10 հարցվածներից ավելի քան 1-ը փաստել է, որ այս կամ անցած տարի չի կարողացել դպրոց հաճախել աշխատանքում ներգրավված լինելու պատճառով: Ամենամեծ տոկոսները գրանցվել են **Գեղարքունիքի (26%), Տավուշի (19%) և Վայոց Ձորի (15%)** մարզերում:

Պատկեր 5. Այս կամ նախորդ տարի Դուք բացակայել եք դպրոցից աշխատանքում ներգրավված լինելու պատճառով



Մեծ կապ կա բնակության համայնքի, սեռի և դպրոցից բացակայության միջև, երբ պատճառը հանդիսանում է աշխատանքում ներգրավված լինելը: Գյուղական համայնքներում ապրող տղաների համար մեծ ռիսկեր կան աշխատանքի պատճառով կրթությունից բացակայելու համար՝ 3 անգամ ավելի շատ տղաներ չեն հաճախել դպրոց (**16%**) աշխատելու պատճառով, քան աղջիկներ (**5%**): Աշխատելու պատճառով դպրոցից բացակայող երեխաների **73%-ը** բնակվում էր գյուղերում: Հատկապես պետք է նշել, որ հարցվածների տարիքը մեծանալու հետ մեկտեղ այս պատճառով բացակայողների թիվը նույնպես աճում է:

Սա իրականում հակասում է երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքին: Մինչդեռ վատ տնտեսական պայմանները՝ հատկապես գյուղական վայրերում, հանգեցնում են աշխատուժի երիտասարդացմանը և երեխաներին տնտեսական հարաբերություններում ներգրավվելուն: Կրթության իրավունքի տեսանկյունից սա համարվում է երեխաների իրավունքների խախտում, որին պետք է բազմակողմանիորեն անդրադառնան համապատասխան պետական հաստատությունները և տեղական իշխանությունները՝ տվյալ հիմնարար իրավունքի կիրառմանն աջակցելու համար: Եզրափակելով վերոնշյալը՝ պետք է փաստել, որ աշխատող երեխաների **40%-ն** աշխատում է շինարարական հրապարակներում, որը, ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, համարվում է վտանգավոր աշխատանք:

Սոցիալ-հոգեբանական բարեկեցություն


Սթրեսի աստիճան

Սույն հետազոտությունը ցույց է տալիս, որ երեխաները ենթարկվում են սթրեսի, հուզվում են, անկանոն են սնվում կամ իրենք իրենց վնասում են: Անհանգստության հիմնական պատճառը լինում է տնային աշխատանքը (**32%**), որին հաջորդում է ծաղրի ենթարկվելու վախը (**8%**) և սոցիալ-հոգեբանական խնդիրները (**8%**): Պետք է առանձնակի ուշադրություն դարձնել նաև այն երեխաներին, ովքեր մտածում են իրենց վնասելու մասին (**4%**), քանի որ դա ուղղակիորեն վկայում է երեխաների մոտ շարունակական սթրեսի մասին: Այս առաջարկությունը նաև հիմնվում է ստացված թվերի վրա, որոնց համաձայն հարցվածների **14%-ը** խոստովանել են, որ տևական ժամանակ եղել են տխուր կամ ընկճված:

Աջակցության և օգնության որոնում

Հարցվածների մոտ կեսը չգիտի, թե ուր դիմել, եթե ցանկանում են խոսել որոշակի խնդրի մասին կամ արտակարգ իրավիճակի դեպքում: **49%-ը** չգիտեն, թե ուր դիմել, երբ հոգեբանական սթրես են ապրում, **28%-ը** տեղյակ չեն, թե ուր դիմել ընտանեկան խնդիրների դեպքում: **49%-ը** տեղյակ չեն՝ ուր դիմել և որտեղից օգնություն խնդրել բռնության ենթարկվելու պարագայում: Եվ **40%-ը** տեղյակ չեն՝ ում դիմել, եթե ենթարկվել են ծաղրի կամ արժանացել անարդար վերաբերմունքի:

Պատկեր 6. Դուք գիտե՞ք՝ ուր դիմել, երբ կարիք ունենաք օգնության կամ մեկի հետ խոսելու




Սա հանգեցնում է ընդհանուր անտեղյակության, երբ երեխաների **89%-ը** իրազեկված չի լինում, թե ում դիմել աջակցության համար: **Ավելի շատ տղաներ (57%), քան աղջիկներ (44%)** տեղյակ չեն, թե ում դիմել օգնության համար, երբ նրանք ունենում են հոգեբանական սթրես: Ավելին, որ-քան ավելի երիտասարդ է հարցվածը, այնքան քիչ հավանական է ստանալ դրական պատասխան այս հարցերին:

Գոհունակություն դպրոցից

Հարցվածների մեծամասնությունը նշել է, որ դպրոցական ենթակառուցվածքները բարելավման կարիք ունեն: Ժամանցի կազմակերպման համար տարածքի առանձնացումն առաջին տեղում է **հարցվածների 58%-ի համար: Նրանց 48%-ը** ցանկանում է, որպեսզի բարելավվեն ջրի և սանիտարական պայմանները: Այլ պահանջները կարող եք տեսնել **Պատկեր 7-ում**:

Պատկեր 7. Ինչը կցանկանայիք փոխել Ձեր դպրոցի ենթակառուցվածքում




Ֆոկուս խմբերի մասնակիցները արել են են դպրոցի միջավայրի բարելավման առաջարկություններ: Ցանկալի է բարելավել հետևյալ ոլորտները՝ դպրոցի ֆիզիկական պայմանները (կահույքի և ՏՏ սարքավորումների հա-

«Օտար մարդկանց մուտքը դպրոց պետք է արգելել՝ շրջանավարտները և այլ անձինք շատ հաճախ այցելում են դպրոցներ և երեխաների հետ խոսելիս օգտագործում են վատ բառեր»:

մալրում, ջրի և սանիտարական պայմանների բարելավում, սպորտային հրապարակների և դասասենյակների վերանորոգում, նախակրթարանների, ճանապարհների, կանաչապատ տարածքների և կայանման տեղերի բարեկարգում), կրթական բովանդակության բարելավում (ուսուցողական ծրագրերի փոփոխություն, ավելի շատ ֆիզիկական զբաղվածության խթանում, ուսուցիչների վերապատրաստում, ավելի շատ լաբորատորիաներ), և վարչարարական հարցեր (գրաֆիկի բարելավում, կարգապահություն, դպրոցական համազգեստի վերացում):

Այս պատասխանները հուշում են, որ չնայած բարեփոխումներին, դեռ բավականին շատ անելիքներ կան դպրոցի ենթակառուցվածքների բարելավման համար՝ երեխաներին բազմակողմանի և բավարար կրթություն տրամադրելու համար:

Պատկեր 8. Գոհունակություն ուսումնական մեթոդներից



Գոհունակություն դասավանդման մեթոդներից

Հարցվածների կեսից ավելին (55%) բավարարված են իրենց դպրոցներում դասավանդման մեթոդներից, իսկ **13%-ը** մեծ մասամբ կամ ընդհանրապես բավարարված չեն:

«Ուսուցիչն իրավունք չունի վիրավորել երեխային, դա մեծ հոգեբանական ճնշում է: Որքան շատ ենք ասում երեխային, որ նա վատն է, այնքան ավելի վատն է նա դառնում»:

Հարցվածներից տարբեր պատճառներով ոչ բավարարված են արտահայտվել հիմնականում 9-րդ և 11-րդ դասարանների աշակերտները (**38%-ը** 9-րդ դասարանցիներ են, իսկ **28%-ը՝ 11-րդ**): Հիմնականում դժգոհ աշակերտները 9-րդ դասարանցիներ են: Նրանք կազմում են հարցվածների **41%-ը**:

Այս արդյունքը լրացուցիչ ուսումնասիրություն է պահանջում՝ վեր հանելու հիմքում ընկած հիմնական պատճառները, որոնք կարող են փոխկապակցված լինել ավագ դպրոց տեղափոխվելու հետ:

Օգնություն տնային աշխատանք կատարելիս

Հարցվածների 17%-ը հայտնել է, որ տնային աշխատանք կատարելիս իրենց տանը երբևիցե չեն օգնել: Այս խմբում ընդգրկված են եղել տարբեր տարիքի, դասարանների, սեռի և բնակության վայրի աշակերտներ: Հարցվածների ամենամեծ խումբը (**33%**) նշել է, որ իրենց երբեմն են տանն օգնել տնային աշխատանք կատարելիս: Հարցվածների **26%-ին** մեծամասամբ տանն օգնել են տնային աշխատանք կատարելիս:


Մասնակցություն և ազդեցություն

Հարգանք երեխայի կարծիքի հանդեպ

Հարցվածներից 10-ից 8-ը (80%) հայտարարել են, որ ուզում են ավելի շատ ազդեցություն ունենալ իրենց առնչվող խնդիրների վրա:

Բոլոր երեխաները պետք է հնարավորություն ունենան ազատ արտահայտելու իրենց առնչվող խնդիրների վերաբերյալ իրենց տեսակետները: Սովորաբար երեխաներին իրենց ձայնը լսելի դարձնելու ֆորմալ հնարավորություններ չեն տրվում: Մեծահասակների պատասխանատվությունն ու պարտականությունն է լսելու, հարգելու և հաշվի առնելու երեխաների կարծիքները նրանց վերաբերող որոշումներ կայացնելիս: Երեխաներն իրենց կարծիքներն արտահայտելու և լրջորեն ընկալվելու իրավունք ունեն: Սա վերաբերում է երեխայի բոլոր միջավայրերին՝ ներառյալ տանը, դպրոցին, համայնքին կամ քաղաքականություն վարող կառույցներին:

Պատկեր 9. Դուք կարո՞ղ եք Ձեզ համար կարևոր ցանկացած հարցի վերաբերյալ տեսակետ արտահայտել



«Մոտ երկու տարի առաջ ես ուզում էի գնալ երաժշտական դպրոց, սակայն իմ ծնողները դեմ էին, քանի որ ես արդեն մեծ էի: Սակայն ես շատ էի ուզում, մենք քննարկեցինք այն, և ինձ հաջողվեց համոզել: Այժմ ես սովորում եմ միջնակարգ դպրոցի 9-րդ, իսկ երաժշտական դպրոցի՝ 2-րդ դասարանում»:

Այս առումով, երեխաների միայն **26%-ն** է կարծում, որ իրենց հնարավորություն է տրվել խոսելու համայնքի խնդիրների մասին, մինչդեռ հարցված երեխաների **82%-ը** նշել է, որ վերջին տարվա ընթացքում կարողացել են արտահայտել իրենց տեսակետները ընտանեկան հարցերի վերաբերյալ: Հարկավոր է նաև նշել, որ որքան մեծանում է հարցվածների տարիքը, այնքան շատանում է հետևյալ պատասխանների քանակը. «Այո, մեր կարծիքը որոշում կայացնողներին հասցնելու համար շատ հնարավորություններ կան»:

10 հարցվածներից ավելի քան 6-ը անտեղյակ էին իրենց դպրոցի զարգացման ծրագրից: Դպրոցի աշակերտական խորհրդի մասին իրազեկվածության մեծ պակաս կա՝ **41%-ը** չգիտեն, թե արդյոք կարող են դառնալ դպրոցի աշակերտական խորհրդի անդամ, մինչդեռ **44%-ը** վստահ են, որ դա հեշտությամբ իրականանալի է:

«Եթե չեք հարցնում անձի կարծիքը, ապա ճնշում եք նրա անհատականությունը, այսինքն՝ Դուք որոշում եք նրա ճակատագիրը, որն արդեն համարվում է ոտնձգություն»:


Հարցվածների կեսը (50%) փաստել է, որ իրենց ծնողները հեշտությամբ կարող

են դառնալ դպրոցի ծնողական խորհրդի անդամ, մինչդեռ նրանց **42%-ը** անտեղյակ էր այդ գործընթացից:

Ստացված թվերը կարող են վերագրվել նաև դպրոցի կառավարման համակարգի վերաբերյալ երեխաների շրջանում իրազեկվածության պակասին՝ ներառյալ ծնողների, ուսուցիչների և երեխաների խորհուրդների, ինչպես նաև նրանց մանդատների և անդամակցության ընթացակարգերի վերաբերյալ, որը կարելի է կարգավորել իրազեկության քարոզարշավի միջոցով:

Ինչևէ, ըստ Պատկեր 10-ի՝ երեխաների **64%-ը** համոզված են, որ կարող են ազդեցություն ունենալ կրթական/դպրոցական հարցերի վրա: Բացի այդ, **հարցվածների 76%-ը կցանկանային ավելի շատ ազդեցություն և հնարավորություն ունենալ՝** իրենց վերաբերող հարցերի շուրջ տեսակետներ արտահայտելու համար:

Պատկեր 10. Եթե «այո», որտեղ եք ազդեցություն ունեցել



«Երեխաների շրջանում վախ և խոչընդոտ է նկատվում ավագանու անդամների, համայնքի ղեկավարների կամ քաղաքական գործիչների հետ շփվելիս: Եթե դուք որևէ խնդիր եք բարձրաձայնում, տնօրենը կարող է մոտենալ և հարցնել՝ «Աշակերտներից ո՞վ է համարձակվել այս հարցը բարձրացնել գյուղապետին»:

Երեխայի իրավունքների պաշտպանություն

Հարցվածների 86%-ը համաձայնեցին այն պնդմանը, որ կարևոր կամ շատ կարևոր է Հայաստանում ուժեղացնել երեխայի իրավունքների պաշտպանությունը: Այս թիվը ցույց է տալիս թեմայի կարևորությունը, և այն չպետք է անտեսվի:

Ապագան

Հարցումը ցույց է տալիս, որ Հայաստանում երեխաներն իրենց ապագան շատ դրական են տեսնում. հարցված **երիտասարդների 82%-ը** դրական են տրամադրված իրենց ապագայի հանդեպ: Դրական պատասխանների քանակը քաղաքում և գյուղում ապրող հարցվածների համար հավասար է (**համապատասխանաբար 83% և 81%**): Պետք է նշել, որ դրական պատասխանները գրեթե հավասար են բաշխված տարիքային խմբերի միջև (տես Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Ինչպես եք պատկերացնում ձեր ապագան

	Դասարաններ		
	6-7 դասար.	8-9 դասար.	10-12 դասար.
Շատ/մասամբ դրական	78.2%	86.2%	81.6%
Շատ/մասամբ բացասական	.5%	1.2%	8.5%
Զգիտեմ	21.3%	12.6%	16.2%
Ընդամենը	100%	100%	100%

Երեխաները նաև հստակ պատկերացնում են իրենց պլանները դպրոցն ավարտելուց հետո: Մեծ մասամբ երեխաները կարծում են, որ գիտեն՝ ուր են գնալու դպրոցն ավարտելուց հետո:

Աղյուսակ 3. Արդյոք գիտե՞ք՝ ինչով եք զբաղվելու դպրոցն ավարտելուց հետո

	Դասարաններ		
	6-7 դասար.	8-9 դասար.	10-12 դասար.
Այո	80.5%	85.5%	85.3%
Ոչ	11.6%	7.9%	6.5%
Զգիտեմ	8%	6.6%	8.2%
Ընդհանուր	100%	100%	100%

Եզրակացություն

Ակնհայտ է, որ այս հետազոտության վերհանած արդյունքներից մի մասը հուսադրող են, իսկ որոշները վկայում են երեխայի իրավունքների կիրարկման ոլորտում առկա բացերի մասին, ինչը, հետևաբար, ազդում է Հայաստանում երեխաների և երիտասարդների բարեկեցության վրա: Ամփոփելով, սույն հարցման արդյունքները արձանագրում են երեխայի իրավունքների և դրանց հետ կապված սոցիալ-հոգեբանական գործոնների մասին երիտասարդական ընկալումների առավել դրական միտումներ՝ համեմատած Հայաստանում պետական և ոչ պետական կազմակերպությունների կողմից իրականացված նմանատիպ այլ հետազոտությունների հետ:

Սույն հարցման առավելությունն է երիտասարդների որոշակի խումբ կողմից սեփական իրավունքների մասին արտահայտվելը, ինչը հետագա տարածման և վերլուծության կայուն հիմք է ապահովում: Հարցման ամենաոգեշնչող արդյունքները երեխաների մեծամասնության վստահությունն է դպրոցն ավարտելուց հետո իրենց ծրագրերի հանդեպ, ապագայի հանդեպ դրական մոտեցումը և գիտելիքները իրենց հիմնական իրավունքների մասին: Թեև շատ դժվար է չափել, թե արդյոք նրանք իրականում պատկերացնում են մարտահրավերները, որոնց առջև կանգնելու են հասուն տարիքում, և թե արդյոք իրենց իրավունքների մասին գիտելիքները իրենց ձգտումների իրականացման համար խթան կհանդիսանան (միայն 25%-ն է նշել, որ կարողացել է ազդել համայնքի խնդիրների լուծման վրա), այնուամենայնիվ, ընդհանուր վստահությունը և դրական արդյունքները ոգեշնչող են: Պետք է նշել, որ հարցերը և ընտրության բազմակի տարբերակներ ունեցող հարցերը հատուկ ընտրվել են տարիքին համապատասխան՝ փորձելով խուսափել ուղղակի հարցերից, որոնք սթրեսային իրավիճակ կստեղծեին և կհանգեցնեին արդյունքների ակնհայտ սահմանափակումների:

Վստահության և ընդհանուր առմամբ դրական պատկերի հետ մեկտեղ՝ կան հարցման այնպիսի ասպեկտներ, որոնք հետաքրքիր ասոցիացիաներ են բացահայտում: Օրինակ, չնայած նրան, որ վերջերս հրապարակված 2015-2016 թվականների Հայաստանի դեմոգրաֆիական և առողջապահական հարցումը (DHS), բացահայտել է, որ 1-14 տարեկան երեխաների 70%-ը ենթարկվել են ֆիզիկական (38%) կամ հոգեբանական (65%)

բռնության¹, «Երեխաների կարծիքով...» հարցման արդյունքներով՝ երեխաները տրամադրված չեն նշել, որ ենթարկվել են բռնության, մինչդեռ միևնույն ժամանակ հարցվածների 40%-ը նշել են, որ տեսել են՝ ինչպես են համայնքում երեխայի ծեծում կամ բռնաբռնություն կարվածում, իսկ 43%-ը նվազագույնը 1-5 անգամ դպրոցում ծաղրանքի ակնատես են եղել: Հիմնարար իրավունքների իմացության բարձր ցուցանիշների հետ մեկտեղ՝ հարցվածների մոտ 52%-ը նշել են, որ չգիտեն՝ ուր դիմել բռնության ենթարկվելու պարագայում: Ըստ մեկ այլ համադրման՝ չնայած հարցվածների մեծ մասը նշել է, որ տեղյակ է Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայից, միայն 30%-ն է նշել, որ դրա իմացության հիմնական աղբյուրը եղել է դպրոցը:

Բոլոր այս համադրումները կարևոր աղբյուր են բոլոր այն մարդկանց վերլուծությունների և դիտարկումների համար, ովքեր ներգրավված են տարբեր թեմատիկ ոլորտներում, փոփոխություններ իրականացնողներ, դոնորներ, քաղաքականություն մշակողներ և որոշում կայացնողներ են: Այս պնդումը հատկապես գործուն է՝ հաշվի առնելով հարցման մեկ այլ կարևոր տվյալ, որտեղ երեխաների ավելի քան 64 %-ը պատասխանել են, որ կարիք ունեն ավելի շատ հնարավորությունների՝ ազդեցություն ունենալու համար կրթությանն ու դպրոցին վերաբերող խնդիրների վրա, իսկ 76%-ը գտել է, որ իրենց կարծիքը պետք է հաշվի առնվի քաղաքական գործիչների և որոշում կայացնողների կողմից իրենց բարեկեցությանն առնչվող հարցերը քննարկելիս, ինչը բխում է Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի չորս հիմնարար սկզբունքներից մեկից: «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը կշարունակի իր ջանքերը՝ երեխաների տեսակետները բոլոր մակարդակներում քաղաքական գործիչների հետ կամրջելու նպատակով՝ վստահ լինելով, որ այս տվյալները կօգտագործվեն լայն հասարակության կողմից:

1 <https://www.dhsprogram.com/pubs/pdf/FR325/FR325.pdf>

Հավելված: Հարցաթերթիկ

Հարց 1. Սեռ

Սեռ	%
Աղջիկ	51.3
Տղա	48.7
Ընդամենը	100.0

Հարց 2. Դասարան

Դասարան	%
6-7 դասար.	32.6
8-9 դասար.	33.9
10-12 դասար.	33.5

Հարց 3. Տարիք

Տարիք	%
11-13 տարեկան	33
14-15 տարեկան	36
16-18 տարեկան	31

Հարց 4.1. Երեխայի իրավունքները երբևէ ներկայացվել են Ձեր դպրոցում

	Դասարան			Սեռ		Ընդամենը
	6-7 դասար.	8-9 դասար.	10-12 դասար.	Աղջիկ	Տղա	
Այո	62.3%	77.1%	71.3%	54.2%	54.2%	70.3%
Ոչ	15.6%	7.6%	10.7%	30.6%	28.1%	11.3%
Չգիտեմ	22.1%	15.3%	18%	15.1%	17.7%	18.4%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Հարց 4.2. Դուք լսել եք Երեւանի իրավունքների կոնվենցիայի մասին

	Դասարան			Սեռ		Ընդամենը
	6-7 դասար.	8-9 դասար.	10-12 դասար.	Աղջիկ	Տղա	
Այո	44.5%	53.6%	64.3%	54.2%	54.2%	54.2%
Ոչ	35.5%	29.5%	23.2%	30.6%	28.1%	29.4%
Չգիտեմ	19.9%	16.9%	12.5%	15.1%	17.7%	16.4%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Հարց 4.3 Երեւանի իրավունքների կոնվենցիան երբևէ ներկայացվել է Ձեր դպրոցում

	Դասարան			Սեռ		Ընդամենը
	6-7 դասար.	8-9 դասար.	10-12 դասար.	Աղջիկ	Տղա	
Այո	29.6%	29.8%	36.0%	32.6%	30.9%	31.8%
Ոչ	23.4%	21.6%	22.5%	21.5%	23.5%	22.5%
Չգիտեմ	47.0%	48.6%	41.5%	45.8%	45.6%	45.7%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Հարց 5.1 Տեղյակ եք բաղաբացիությունը, անունը և ընտանեկան կապերը պահպանելու իրավունքի մասին

	Դասարան			Սեռ		Ընդամենը
	6-7 դասար.	8-9 դասար.	10-12 դասար.	Աղջիկ	Տղա	
Այո	57.5%	66.6%	63.2%	61.9%	63.2%	62.5%
Ոչ	42.5%	33.4%	36.8%	38.1%	36.8%	37.5%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Հարց 5.2 Տեղյակ եք ծնող(ներ)ի հետ ապրելու և ծնող(ներ)ի կողմից խնամք ստանալու իրավունքի մասին

	Դասարան			Սեռ		Ընդամենը
	6-7 դասար.	8-9 դասար.	10-12 դասար.	Աղջիկ	Տղա	
Այո	87%	86.2%	85.1%	87.3%	84.8%	86.1%
Ոչ	13%	13.8%	14.9%	12.7%	15.2%	13.9%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Հարց 5.3 Տեղյակ եք մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի մասին

	Դասարան			Սեռ		Ընդամենը
	6-7 դասար.	8-9 դասար.	10-12 դասար.	Աղջիկ	Տղա	
Այո	59.8%	67.1%	68.9%	65.4%	65.2%	65.3%
Ոչ	40.2%	32.9%	31.1%	34.6%	34.8%	34.7%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Հարց 5.4 Տեղյակ եք Ձեր հայացքները և կարծիքը ազատորեն արտահայտելու իրավունքի մասին

	Դասարան			Սեռ		Ընդամենը
	6-7 դասար.	8-9 դասար.	10-12 դասար.	Աղջիկ	Տղա	
Այո	65.2%	73%	75.9%	74.0%	68.7%	71.4%
Ոչ	34.8%	27%	24.1%	26.0%	31.3%	28.6%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Հարց 5.5 Տեղյակ եք կրթություն ստանալու իրավունքի մասին

	Դասարան			Սեռ		Ընդամենը
	6-7 դասար.	8-9 դասար.	10-12 դասար.	Աղջիկ	Տղա	
Այո	93.6%	93.9%	87.6%	94.6%	88.5%	91.7%
Ոչ	6.4%	6.1%	12.4%	5.4%	11.5%	8.3%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Հարց 5.6 Տեղյակ եք անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի մասին

	Դասարան			Սեռ		Ընդամենը
	6-7 դասար.	8-9 դասար.	10-12 դասար.	Աղջիկ	Տղա	
Այո	40.4%	53.3%	51.7%	46.1%	51.2%	48.6%
Ոչ	59.6%	46.7%	48.3%	53.9%	48.8%	51.4%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Հարց 5.7 Տեղյակ եք միավորումների և խաղաղ հավաքների իրավունքի մասին

	Դասարան			Սեռ		Ընդամենը
	6-7 դասար.	8-9 դասար.	10-12 դասար.	Աղջիկ	Տղա	
Այո	31.7%	39.8%	35.8%	33.3%	38.5%	35.8%
Ոչ	68.3%	60.2%	64.2%	66.7%	61.5%	64.2%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Հարց 5.8 Տեղյակ եք հանգստի և ժամանցի իրավունքի մասին

	Դասարան			Սեռ		Ընդամենը
	6-7 դասար.	8-9 դասար.	10-12 դասար.	Աղջիկ	Տղա	
Այո	78.3%	86.2%	78.4%	82.1%	79.8%	81%
Ոչ	21.7%	13.8%	21.6%	17.9%	20.2%	19%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Հարց 5.9 Տեղյակ եք տնտեսական շահագործումից կամ երեխայի կրթությանը կամ առողջությանը վնաս հասցնող աշխատանքից պաշտպանված լինելու իրավունքի մասին

	Դասարան			Սեռ		Ընդամենը
	6-7 դասար.	8-9 դասար.	10-12 դասար.	Աղջիկ	Տղա	
Այո	63.9%	63.9%	63.7%	66.2%	61.3%	63.8%
Ոչ	36.1%	36.1%	36.3%	33.8%	38.7%	36.2%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Հարց 5.10 Տեղյակ եք ֆիզիկական կամ հոգեբանական բռնությունից, վիրավորանքից, կոպիտ վերաբերմունքից պաշտպանված լինելու իրավունքի մասին

	Դասարան			Սեռ		Ընդամենը
	6-7 դասար.	8-9 դասար.	10-12 դասար.	Աղջիկ	Տղա	
Այո	77.2%	81.3%	82.6%	85.7%	74.8%	80.4%
Ոչ	22.8%	18.7%	17.4%	14.3%	25.2%	19.6%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%

Հարց 5.11 Նշված իրավունքներից ոչ մեկից տեղյակ չեմ

	Դասարան			Սեռ		Ընդամենը
	6-7 դասար.	8-9 դասար.	10-12 դասար.	Աղջիկ	Տղա	
